ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք [illegible]
Հեռ. (093) [illegible] 76 56

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Նոյեմբերի 2015թ. Թիվ 33-Ա

ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13 ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ(4) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ(0)

Է. Արրահամյան ---------------------- / ստորագրություն/--------------
Ս. Կարապետյան -------------- / ստորագրություն/ -----------
Վ. Մարգարյան ---------------------- / ստորագրություն/ ---------------
Ա. Խաչոյան ------------------- --------------/ ստորագրություն/ ----------------

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված
Եղեգնուտ համայնքի ավագանու
2015 թ-ի նոյեմբերի 13-ի թիվ 33-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ։
3.ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ։
4. [illegible] ՏՐԱՍՏԱՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ [illegible] ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՎԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 - 76 - 56

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 Նոյեմբերի.2015թ. ԹԻՎ 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8 և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 հոդվածի 2-րդ մասով համայնքի ավագանին *որոշում է*՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ(+)	ԴԵՄ(0)	ՉԵՌՆԱՏՎԱԾ(0)
Է. Աբրահամյան	----------	---------- / ստորագրություն	----------
Ա. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ա. Ռաֆոյան	----------	----------/ ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ավագանու կողմից ընդունված իրավական ակտի նախագծի օրինականության և հիմնավորվածության ստուգման մասին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ղեկավար՝ Ռազմիկ Մարգարյանս. ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 – րդ հոդվածի 1 – ի մասի 2 – րդ կետով. ստուգեցի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ավագանու 2015թ-ի նոյեմբերի 13 ի «Համայնքի վարչական տարածքում 2016թ-ի համար Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 34-Ն որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ստուգմամբ պարզեցի, որ տվյալ ակտի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 1 – ին մասի 18 – րդ կետի պահանջով:

Ակտի ընդունումը ուղղված է կարգավորելու համայնքի վարչական տարածքում Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ավագանու 2015թ-ի Նոյեմբերի 13– ի «Համայնքի վարչական տարածքում 2016 թվականի համար «Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»» թիվ 34-Ն որոշումը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Եղեգնուտի
գյուղական համայնքի ավագանու
13 նոյեմբերի.2015թ-ի թիվ 34-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար դրամ,

2) սույն կետի «1» – ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201 – ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. 501 – 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ երկու հազար դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1» - ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ի կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր դրամ,

2) հեղուկ վառելիքի, սեխմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առքտրի կետերում հեղուկ վառելիքի և կամ(կամ) , սեխմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ,

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ:

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ,

բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երկու հարյուր դրամ:

6. Համայնքի տարածքում քանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ.

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00} – ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
6) վիճակախաղերի կազմակերպման համա՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև քսան ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը քսան և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացրկ տարվա համար սահմանվում է երկու հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել երկու հազար դրամ, յուրաքանչյուր մասնակցից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 1[illegible] 76 - 56

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015թ. ԹԻՎ 35-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Պատերազմի և աշխատանքային վետերանների միավորման Արմավիրի տարածաշրջանի խորհուրդի 22.10.2015 թվականի գրությունը, Եղեգնուտ համայնքի սոցիալապես անապահով բնակչուհի Գայանե Արամայիսի Հարությունյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Պատերազմի և Աշխատանքային վետերանների միավորման Արմավիրի տարածաշրջանային խորհրդին տրամադրել 20000 (քսան հազար) դրամ նպիրատվություն:
2. Եղեգնուտ համայնքի սոցիալապես անապահով Գայանե Արամայիսի Հարությունյան բնակչուհուն տրամադրել 60000 (վաթսուն հազար) դրամի դրամական օգնություն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ(4) ԴԵՄ(0) ՉԵՌՆՊԱՀ(0)

Է. Աբրահամյան ---------- / ստորագրություն ----------
Ս. Կարապետյան ---------- / ստորագրություն/ ----------
Վ. Մարգարյան ---------- ստորագրություն/ ----------
Ա. Մաթոյան ---------- / ստորագրություն/ ----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստան, Հանրապետության պողոտա, Վանաձորի մարզի
Նովեմբերի [illegible] 24 [illegible]
Հեռ. (093) 38 - 76 - 56

ՈՐՈՇՈՒՄ

13 Նոյեմբերի 2015թ. ԹԻՎ 36-Ա

ՏԱՆՁՈՒՏ ԿԱՄՇԻՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՏԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 րդ հոդվածի 1 ին մասի 20-րդ կետով հիմք ընդունելով <<Եղվարդշին>> ԲԲԸ-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոյեմբերի համայնքի վարչական տարածքի այլ հողերից 1,2հա (ծածկագիր՝ 095 002) ժամանակավոր օգտագործման հատկացնել <<Եղվարդշին>> ԲԲԸ-ին <<Տանձուտ-Կամշու>> ջրատարի վերանորոգման շինարարական աղբի համար:

2. Առաջարկել <<Եղվարդշին>> ԲԲԸ-ին պահպանելու <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները և շրջակա միջավայրի պահպանությունը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ(4)	ԴԵՄ (0)	ՉԵՌՆԱՐԿՈՒՍ(0)
Է. Աբրահամյան	----------	/ ստորագրություն/	----------
Ս. Կարապետյան	----------	/ ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	/ ստորագրություն/	----------
Ա. Ռաշոյան	----------	/ ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան